Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Սիս գյուղի <<Անուշիկ>> մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի դաստիարակի (1.25 դրույքաչափով) և հոգեբանի (1 դրույքաչափ) թափուր պաշտոնների համար:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին ԿԳՄՍ նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆավորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:

Փաստաթղթերն ընդունվում են մարտի 21-ից մինչև ապրիլի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. ապրիլի 19-ին՝ ժամը 15:00–ին:

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք գ.Սիս Մասիսի խճուղի 24

Հեռ՝ +37477788742 Արփենիկ Պետրոսյան (ժ/պ)

Էլ.փոստի հասցե՝ sisi.mankapartez@mail.ru